**Հավելված 1**

ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 301-Ա որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ «Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

**Թումանյան համայնքի «Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի.**

1.Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2) համապատասխան բնագավառի առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և բավարարում են «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշներին.

3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

**1.1. *Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝***

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3)համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**2.Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը (նյութերը).**

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3)քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

*Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:*

***3.*** Մրցույթը կանցկացվի ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Թումանյան,քաղաք Թումանյան, Կենտրոնական փողոց , շենք 1), ***2023 թվականի նոյեմբերի 10-ին, ժամը՝10:00-ին:***

4 .Դիմումներն ընդունվում են Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմում հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Թումանյան, քաղաք Թումանյան, Կենտրոնական փողոց , շենք 1, հեռ. 098 04-80-46), ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝***2023 թվականի 31-ը՝ ժամը 18:00-ն :***

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 301-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ «Լոռու մարզի Թումանյան համայնքի Քարինջ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

***Թումանյան համայնքի «Լոռու մարզի Թումանյան համայնքի Քարինջ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի.***

1.Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացիները ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2) համապատասխան բնագավառի առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և բավարարում են «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշներին.

3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

**1.1. *Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝***

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3)համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**2.Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը (նյութերը).**

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3)քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

*Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:*

**3.** Մրցույթը կանցկացվի ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Թումանյան,քաղաք Թումանյան, Կենտրոնական փողոց , շենք 1), ***2023 թվականի նոյեմբերի 10-ին, ժամը՝ 10:00-ին:***

4 .Դիմումներն ընդունվում են Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմում հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Թումանյան, քաղաք Թումանյան, Կենտրոնական փողոց , շենք 1, հեռ. 098 04-80-46), ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝***2023 թվականի հոկտեմբերի 31-ը՝ ժամը 18:00-ն :***

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ